ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2025 թվականի N 998 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1457-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության ծառայության և պետական պահպանության ծառայության համակարգերի զինծառայողների, փրկարարական ծառայողների իրային ապահովության կարգը (չափաքանակները) սահմանելու մասին» N 1457-Ն որոշման N 2.1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) ուժը կորցրած ճանաչել N 1 չափաքանակի աղյուսակի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 29-րդ, 30-րդ և 31-րդ կետերը.

2) ուժը կորցրած ճանաչել N 1 չափաքանակի «Ծանոթագրություններ.» պարբերության 1-ին և 3-րդ կետերը.

3) N 2 չափաքանակի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 29-35-րդ կետերով՝

«

29.	Կեպի գլխարկ	060	1 հատ	1 տարի
30.	Տակտիկական տաբատ (շալվար)	061	2 հատ	1 տարի
31.	Բաճկոն՝ սև գույնի	062	1 հատ	3 տարի
32.	Դասական կոստյում	063	2 հատ	3 տարի
33.	Տակտիկական կոշիկ	064	1 զույգ	2 տարի
34.	Երկարաթև սև վերնաշապիկ	065	1 հատ	1 տարի
35.	Կարճաթև սև մարտավարական վերնաշապիկ (պոլո)	066	1 հատ	1 տարի

».

4) N 2 չափաքանակի «Ծանոթագրություններ.» պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ կետով.

«11. Թույլատրվում է դասական կոստյումը հատկացնել ամենօրյա համազգեստի փոխարեն։».

5) ուժը կորցրած ճանաչել N 2 չափաքանակի աղյուսակի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 9-րդ, 12-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 27-րդ և 28-րդ կետերը.

6) ուժը կորցրած ճանաչել N 2 չափաքանակի «Ծանոթագրություններ.» պարբերության 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը.

7) N 3 չափաքանակի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 20-26-րդ կետերով՝

«

20.	Կեպի գլխարկ	079	1 հատ	1 տարի
21.	Տակտիկական տաբատ (շալվար)	080	2 հատ	1 տարի
22.	Բաճկոն՝ սև գույնի	081	1 հատ	3 տարի
23.	Դասական կոստյում	082	2 հատ	3 տարի
24.	Տակտիկական կոշիկ	083	1 զույգ	2 տարի
25.	Երկարաթև սև վերնաշապիկ	084	1 հատ	1 տարի
26.	Կարճաթև սև մարտավարական վերնաշապիկ (պոլո)	085	1 հատ	1 տարի

».

8) N 3 չափաքանակի «Ծանոթագրություններ.» պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ կետով՝

«6. Թույլատրվում է դասական կոստյումը հատկացնել ամենօրյա համազգեստի փոխարեն։».

9) ուժը կորցրած ճանաչել N 3 չափաքանակի աղյուսակի 2-րդ կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

24.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ